

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՌՈՒԶԱՆ ԷԴԳԱՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

**ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(կենսաբանության) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան-2014

**Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

Կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Սահակյան Լ.Ա.

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Սարգսյան Յ.Գ.

Առաջատար
պետական կազմակերպություն՝

Մ.Նալբանդյանի անվան Գյումրու
պետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է մարտի 27-ին ին ժամը
14:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի «Մանկավարժության» 020 մասնագիտական
խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ-ի փետրվարի 27-ին

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝

Ա.Յ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից դպրոցում կրթության բովանդակության և դաստիարակության կարևոր նպատակներից է բնության երևույթները, օրենքներն ու օրինաչափությունները իմացող, ճանաչողության մեթոդներին տիրապետող և գործնականում կիրառող, մարդու և բնության ներդաշնակ հարաբերությունների կարևորությունը գիտակցող, գիտական աշխարհայացք ունեցող անձի ձևավորումը:

Հանրակրթական դպրոցում «Կենսաբանություն» առարկայի ուսուցման նպատակն է ապահովել սովորողների կողմից բնության և կենդանի օրգանիզմների մասին գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը, արժեքային համակարգի ձևավորումը, էկոլոգիական գրագիտությամբ, և մշակույթով օժտված անձի դաստիարակումը, որը կգիտակցի կյանքի՝ որպես երկիր մոլորակի վրա բարձրագույն արժեքի նշանակությունը և կկարողանա բնության ու հասարակության հետ ներդաշնակ հարաբերություններ ձևավորել՝ դրսևորելով ինքնագիտակցության բարձր աստիճան և պատասխանատվության գգացում:

Հանրակրթական ավագ դպրոցի հիմնական նպատակը սովորողի՝ մասնագիտական կրթություն ստանալու, նրանց ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով ապահովումն է: Այն նախատեսում է յուրաքանչյուր սովորողի՝ հետագա ուսումնառության և աշխատանքային գործունեության համար պայմանների ստեղծումը, ընդհանուր հոսքում ուսումնական բնագավառների ներդաշնակ և ամբողջական ուսուցումը, տարբերակված հոսքերում առարկաների արդյունավետ ընտրության և ժամաբաշխման հնարավորությունը:

Ավագ դպրոցում տարբերակված հոսքի ուսուցման կազմակերպման, նպատակների սահմանման, ուսուցման անհատականացման, հոսքային դասարաններում սովորողների ընդունելության չափանիշների մշակման, տարբերակված ուսուցման դասընթացի բովանդակության ձևավորման խնդիրները դիտարկվել են հոգեբանների, մանկավարժների, մեթոդիստների հետազոտություններում (Լ.Յա. Զորինա, Գ.Ս. Կալինովա, Բ.Դ. Կոմիսարով, Վ.Վ. Կրասնիկ, Ի.Յա. Լեբներ, Վ.Ն. Մաքսիմովա, Ա.Վ. Մարինա, Ի.Մ. Օսմոլովսկայա, Ե.Ս. Ռաբանսկի, Լ.Ն. Ռոժինա, Ի.Է. Ունտ, Ն.Մ. Շախման, Տ.Վ. Թանգամյան):

Ներկայումս առկա է խոր հակասություն մի կողմից գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական, էկոլոգիական հարափոփոխ պայմաններում կենսաբանական կրթության բովանդակության բարեփոխման, ուսուցման մեթոդական մոր համակարգի մշակման անհրաժեշտության, մյուս կողմից հանրակրթական ավագ դպրոցում կենսաբանության հոսքային ուսուցման տեսական և մեթոդական ոչ բավարար մշակվածության միջև:

Այդ հակասության լուծման ուղիների որոնումն էլ պայմանավորեց մեր հետազոտության թեմայի ընտրությունը՝ «Կենսաբանության դասավանդման մեթոդիկայի կատարելագործման ուղիները ավագ դպրոցում»:

Հետազոտության նպատակն է՝ մշակել ավագ դպրոցում կենսաբանության ուսուցման արդյունավետ մեթոդիկա:

Հետազոտության օբյեկտը ավագ դպրոցում կենսաբանության ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան ավագ դպրոցում կենսաբանության տարբերակված ուսուցման մեթոդիկան է:

Հետազոտության գիտական վարկածն այն է, որ ավագ դպրոցում կենսաբանության տարբերակված ուսուցումն արդյունավետ կիրականանա, եթե՝

1. հստակ սահմանվեն ավագ դպրոցում տարբերակված հոսքի ուսուցման նպատակները,

2. բացահայտվեն և որոշակիացվեն հոսքային ուսուցման սկզբունքները,

3. առաջադրված նպատակներին ու սկզբունքներին համապատասխան որոշվեն կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման բովանդակությունն ու կառուցվածքը,

4. մշակվեն այն ձևերը, միջոցները, մեթոդները, ուղիները, որոնք կնպաստեն ուսուցման տարբերակմանն ու անհատականացմանը:

Հետազոտության խնդիրներն են.

1. Հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության, պատմագիտական նյութերի և աղբյուրների հիման վրա բացահայտել տարբերակված հոսքային ուսուցման պատմական տեսանկյունները, կենսաբանության հոսքային ուսուցման փորձը հայրենական և արտասահմանյան կրթական համակարգերում:

2. Մշակել և գիտափորձով հիմնավորել կենսաբանության տարբերակված հոսքային ուսուցման մեթոդական համալիրի մոդելը, ձևակերպել և հիմնավորել ուսուցման նպատակները:

3. Սահմանել ավագ դպրոցում կենսաբանության տարբերակված ուսուցման բովանդակության ձևավորման և ուսուցման գործընթացի կազմակերպման սկզբունքները:

4. Մշակել ավագ դպրոցում տարբերակված հոսքի ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևերի, մեթոդների և միջոցների համալիրը և գիտափորձով հիմնավորել մշակված մեթոդիկայի արդյունավետությունը:

Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- դասական (հումանիտար) և ռեալական (բնագիտական) կրթության վերաբերյալ մեթոդաբանական տեսությունները,

- անձի ձևավորման և զարգացման վերաբերյալ հայեցակարգերը (Լ.Ի. Բոժովիչ, Ա.Ն. Լեոնտև, Ս.Լ. Ռուբինշտեյն),

- համակարգային մոտեցման մեթոդաբանությունը (Ի.Վ. Բլաուբերգ, Վ.Ն. Սաղովսկի, Է.Գ. Յուդին և այլք),

- անձնակենտրոն գաղափարները (Ա.Ն. Լեոնտև, Ի.Յա. Լերներ, Ս.Լ. Ռուբինշտեյն, Ի.Ս. Յակիմանսկայա, Կ. Ռոջերս),

- պրոբլեմային և տարբերակված ուսուցման վերաբերյալ հայեցակարգերը (Ա.Մ. Սատյուշկին, Ի.Է. Ունտ, Ի.Ս. Օսմոլովսկայա),

- բնագիտական կրթության համակարգում մարդասիրական գաղափարները (Ն.Ս. Ալեքսանդրովա, Ն.Դ. Անդրեևա, Ն.Ս. Վերգիլին, Ա.Ն. Ջախլեբնի, Ի.Դ. Ջվերև, Վ.Ս. Կորսունսկայա):

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են

հետազոտության հետևյալ մեթոդները՝

- տեսական վերլուծություն, համադրում, համեմատում, ընդհանրացում, վերացարկում, համակարգում, ինչպես նաև պատմահամեմատական մեթոդներ,

- Էմպիրիկ՝ մանկավարժական դիտում, զրույց, բանավեճ, անկետավորում, թեստավորում, մանկավարժական գիտափորձ՝ հաստատող, ձևավորող, ամփոփող փուլերով,
- գիտափորձի տվյալների մաթեմատիկական վերլուծության վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության գիտական նորությունը.

1. Եշտվել, որոշակիացվել և սահմանվել են «տարբերակված ուսուցում», «հոսքային ուսուցում», «ընտրովի դասընթաց» հասկացությունները, դասակարգվել են մասնագիտական և ոչ մասնագիտական ընտրովի դասընթացները:

2. Ստեղծվել է կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման մեթոդիկական ձևավորման մանկավարժական մոդելը:

3. Մշակվել է բնագիտական հոսքի դասարաններում ընդհանուր կենսաբանության ուսուցման մեթոդիկա, որը ներառում է ուսուցման անձնակողմնորոշիչ նպատակները, սովորողի անձի զարգացմանն ու մասնագիտական կողմնորոշմանը նպաստող բովանդակությունը, ուսուցման անհատականացմանն ու տարբերակմանը նպաստող ձևերը, մեթոդները և միջոցները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

1. Հիմնավորվել են կենսաբանության հոսքային ուսուցման դասընթացի բովանդակության ձևավորման սկզբունքները (մարդասիրացման, մշակութափայլման, գիտապատմական, հոսքային տարբերակման, կենսաբանական գիտության հիմնարարության, մասնագիտական ուղղվածության) և կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման գործընթացի կազմակերպման սկզբունքները (անհատականացման, պրոբլեմային ուսուցման, երկխոսական ուսուցման, սովորողների կոլեկտիվ և անհատական գործունեության միասնության, ինքնուրույնության, սովորողների դրոպապատճառների և իմացական պահանջմունքների բավարարման և այլն):

2. Առաջարկվել են ավագ դպրոցում տարբերակված հոսքային ուսուցման առանձնահատուկ սկզբունքներ՝ ուսումնափնացական և հետազոտական գործունեության միասնության, սովորողների ստեղծագործական ակտիվության և այլն:

3. Կառուցվել է ավագ դպրոցում կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման մեթոդիկայի տեսական մոդելը:

Հետազոտության գործնական նշանակությունը.

1. Մշակվել է ավագ դպրոցում կենսաբանության ուսուցման արդյունավետ մեթոդիկան, որը կարելի է արդյունավետ կիրառել ավագ դպրոցի հոսքային ուսուցման պրակտիկայում:

2. Կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման մեր կողմից մշակված մեթոդիկան կարող է կիրառվել հանրակրթական ավագ դպրոցի բնագիտական հոսքի շրջանակներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կենսաբանության ուսուցման պրակտիկայում, ինչպես նաև մանկավարժական կադրերի որակավորման բարձրացման համակարգում և մանկավարժական բուհում կենսաբանության ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության գործընթացում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը
Երաշխավորվում են հոգեբանամանկավարժական և մեթոդաբանական այն հետազոտությունների վերլուծությամբ, որոնք հիմնված են գիտական արդի

նվաճումների, կրթության զարգացման ժամանակակից միտումների և անձնակողմնորոշիչ, անձնակենտրոն, համակարգային մոտեցումների վրա, հետազոտության նպատակներին ու խնդիրներին համարժեք մեթոդների կիրառմամբ, ստացված արդյունքների որակական և քանակական վերլուծությամբ, ուսումնադաստիարակչական գործընթացում մեթոդական և մանկավարժական ժամանակակից գաղափարների ներդրմամբ:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը իրականացել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության, կենսաբանության և կենսաբանության դասավանդման մեթոդիկայի ամբիոններում, գիտափորձի բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում, հրատարակված գիտական հոդվածներում:

Հետազոտության բազա են հանդիսացել Երևան քաղաքի թիվ 16, 83, 119 և 160 դպրոցները:

Հետազոտությունն անցկացվել է **երեք փուլով**.

Առաջին փուլում (2006-2007) անցկացվել է հետազոտության հիմնախնդրի շուրջ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության վերլուծություն, որոշվել են հետազոտության առարկան, խնդիրները, մեթոդները, վերլուծվել է հետազոտվող հիմնախնդրի վիճակը կենսաբանության ուսուցման պատմության, տեսության մեջ և պրակտիկայում, որոշվել են կենսաբանության տարբերակված հոսքային ուսուցման հիմնախնդրի հետազոտության ուղղությունները, մշակվել է գիտափորձի հաստատող փուլի մեթոդիկան, անցկացվել է հաստատող գիտափորձը, ամփոփվել են գիտափորձի արդյունքները:

Երկրորդ փուլում (2007-2008) կառուցվել է ավագ դպրոցում բնագիտական հոսքի դասարանների համար կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման մեթոդիկան, որոշվել են արդյունավետ ձևերը, մեթոդներն ու միջոցները: Մշակվել է գիտափորձի ձևավորող փուլի անցկացման մեթոդիկան, իրականացվել է ձևավորող գիտափորձը, վերլուծվել են ստուգողական և փորձարարական փուլերի արդյունքները:

Երրորդ փուլում (2009-2011) ավարտվել է գիտափորձը, համակարգվել, ընդհանրացվել, ամփոփվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են մեթոդական հանձնարարականներ, ավարտվել է ատենախոսության շարադրանքը:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Հանրակրթական ավագ դպրոցում «Բնական գիտություններ» ուսումնական բնագավառի շրջանակներում կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման մեթոդիկան հիմնված է հոսքային ուսուցման համար նախատեսված դասընթացի բովանդակության ձևավորման և ուսուցման կազմակերպման սկզբունքների վրա՝

- Կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման գործընթացի կազմակերպումը հիմնվում է ուսուցման անհատականացման, ուսումնական և հետազոտական գործունեության միասնության, պրոբլեմային ուսուցման, երկխոսական ուսուցման, կոլեկտիվ և անհատական գործունեության միասնության, սովորողների ստեղծագործական ակտիվության, ինքնուրույնության, իմացական պահանջմունքների բավարարման,

հետագայում մասնագիտական գործունեություն իրականացնելու դրդապատճառների ձևավորման սկզբունքների վրա:

2. Ավագ դպրոցի բնագիտական հոսքի դասարաններում կենսաբանության տարբերակված ուսուցման մեթոդիկայի մոդելը ներառում է նպատակային, բովանդակային, արդյունավետության, գիտելիքների, արժեքային բաղադրատարրերը և հիմնվում է ուսուցման մարդասիրացման, անհատականացման, հոսքային ուսուցման գաղափարների վրա:

3. Բնագիտական հոսքի դասարաններում կենսաբանության ուսուցման մեթոդիկան ընդգրկում է անձնակողմնորոշված նպատակներ. բովանդակության մեջ խորությամբ արտացոլված են տեսական ընդհանրացումներն ու ստեղծագործական ուղղվածությունը. ուսուցման ձևերը, միջոցներն և մեթոդները նպաստում են ուսունմական գործընթացի անհատականացմանն ու տարբերակմանը:

4. Հետազոտության դրական արդյունքները, որոնք ստացվել են մեր կողմից մշակված մեթոդիկայի ներդրման արդյունքում, արտահայտվում են կենսաբանության և այդ բնագավառի մասնագիտությունների վերաբերյալ գիտելիքների յուրացման որակի բարձրացմամբ, սովորողների կողմից իմացական, մեթոդաբանական, գործնական կարողությունների ու հմտությունների տիրապետմամբ, կենսաբանության և այդ բնագավառի մասնագիտությունների ուսունմասիրման նկատմամբ հետաքրքրության զարգացմամբ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (174 անուն), հավելվածից և 183 տպագիր էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հիմնախնդրի արդիականությունը, ցույց է տրված հետազոտության մշակվածության աստիճանը, ներկայացված է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, խնդիրները, մեթոդաբանական հիմքը, մեթոդները, գիտական մոդուլը, տեսակն և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության հավաստիությունը, փորձաքննությունը և կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Տարբերակված հոսքի ուսուցման հիմնախնդրի մանկավարժահոգեբանական հիմնավորումը»**, խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Տարբերակված հոսքի ուսուցման կազմակերպման փորձը հայրենական մանկավարժության մեջ» ներկայացված է տարբերակված հոսքի ուսուցման կազմակերպման փորձը հայրենական մանկավարժության մեջ:

20-րդ դարի 20-ական թվականներին ձևավորվեցին ութամյա և իննամյա դպրոցներ՝ հիմնականում մասնագիտական ուղղվածությամբ:

Երկրորդ ենթագլխում՝ «Տարբերակված հոսքի ուսուցման կազմակերպման փորձը արտասահմանյան կրթական համակարգերում» ներկայացված է տարբերակված հոսքի ուսուցման կազմակերպման փորձը արտասահմանյան կրթական համակարգերում, որի վերլուծության արդյունքում եզրակացվել է, որ

տարբերակված ուսուցումը և հոսքային ուղղվածությունը բավականաչափ լայն կիրառում ունի մի շարք երկրների կրթական համակարգում:

Երրորդ ենթագլխում՝ «Տարբերակված հոսքի ուսուցման հոգեբանամանկավարժական հիմնավորումը» տրված է տարբերակված հոսքի ուսուցման հոգեբանամանկավարժական հիմնավորումը: Նշվում է, որ մանկավարժության մեջ մշակվել են տարբերակված հոսքային ուսուցման բազմաթիվ տարբերակներ: Հոսքային ուսուցման համակարգում կրթական կարևոր գործառույթ են իրականացնում ընտրովի դասընթացները, որոնք կազմում են ավագ դպրոցի ուսումնական ծրագրի պարտադիր մասը:

Հետազոտությամբ պարզվեց, որ կրթության պետական նորմատիվային փաստաթղթերում հոսքային ուսուցման կազմակերպման և ուսումնական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները լիարժեքորեն չեն արտահայտված: Բավարար չափով ճշգրտված չեն այն հիմնական հասկացությունները, որոնք բնութագրում են հոսքային ուսուցումը՝ որպես ուսուցչի և աշակերտի փոխգործունեության գործընթաց:

Այդ նպատակով քննարկված և սահմանված են «պրոֆիլ», «անհատական ոճ», «թեքում», «անհատականացում», «տարբերակում» հասկացությունները: Ներկայացված են մի շարք մանկավարժների կողմից տրված այդ հասկացությունների բնութագրումները: Ներկայացված են ուսուցման տարբերակմանը բնորոշ առանձնահատկությունները:

Տարբերակված հոսքային ուսուցումը ուսումնական գործընթացի ժողովրդավարացման ու մարդասիրացման որոշիչ գործոն է: Մեր հետազոտության շրջանակներում ուսուցման տարբերակումը դիտարկվում է որպես հոսքային ուսուցման հիմք: Տարբերակված ուսուցումը կազմակերպվում է բազմազան միջոցներով, օրինակ խմբային տարբերակված աշխատանք, դասի ընթացքում և տնային համծնարարությունների շրջանակներում տարբերակված առաջադրանքներ՝ սովորողների ընտրությամբ և ըստ նախասիրությունների:

Տարբերակված ուսուցման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների հիման վրա սահմանված են ուսուցման տարբերակման ձևերը՝ այլընտրանքային և նախասիրական պարապմունքները, մի շարք առարկաների՝ սովորողների ընտրությամբ խորացված ուսումնառության նպատակով դասարանների կազմակերպումը և մասնագիտացված (թեքումով) դպրոցների ստեղծումը, ներդասարանային տարբերակում, բարձր մակարդակով ուսուցմամբ դասարաններ, տարբերակում ըստ սովորողների հոգեբանական առանձնահատկությունների և այլն: Տարբերակված ուսուցման կազմակերպման թվարկված ձևերում մասնագիտական կողմնորոշում ունեցող ուսուցման հատկանիշները առավել հատուկ արտահայտվում են այն դասարաններում, որտեղ սովորողները հիմնականում կողմնորոշված են բուհ ընդունվելուն:

Ատենախոսության «Հանրակրթական ավագ դպրոցում կենսաբանության հոսքային ուսուցման տեսական և մեթոդական հիմնավորումը» խորագիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Տարբերակված հոսքի ուսուցման առանձնահատկությունները կենսաբանության դասավանդման պրակտիկայում» դիտարկված են տարբերակված հոսքի ուսուցման առանձնահատկությունները կենսաբանության դասավանդման պրակտիկայում:

Առանձին առարկաների՝ սովորողների ընտրությամբ խորացված ուսուցմամբ

դպրոցներն ու դասարանները տարբերակված ուսուցման առավել բարձր աստիճաններ էին, քանի որ սովորողներն ուսումնասիրում էին իրենց հետաքրքրող բնագավառում միայնակ կապված այն առարկաների համալիրը, որոնք օգնում էին կողմնորոշվել ապագա մասնագիտության ընտրության հարցում՝ իրենց առջև ամենևին խնդիր չդնելով ընդհանուր կրթության հետ սովորողին մասնագիտություն տալ: Խորացված ուսուցմամբ և ֆակուլտատիվ դասընթացները իրականացնում էին մինչև մասնագիտական պատրաստություն և կատարում մասնագիտական կողմնորոշման գործառույթ:

Ուսուցման գործընթացի տարբերակված հոսքային ձևով կազմակերպման միտումները ավելի որոշակի դրսևորվեցին 20-րդ դարի 80-ական թթ.: Կենսաբանության դպրոցական դասընթացի ծրագրերի հեղինակները կրթության բովանդակությունը կապում էին դպրոցի տեսակի հետ՝ առաջարկելով թեքումով դպրոցի գաղափարը, դպրոց, որը պետք է ապահովեր ուսման բավականաչափ բարձր մակարդակ:

20-րդ դարի վերջին տասնամյակում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, այդ թվում և ՀՀ-ում կրթական համակարգի կառուցման հիմնական սկզբունքներից էր ուսուցման տարբերակված հոսքային կազմակերպումը, որն ապահովում էր տարբեր տիպերի դպրոցների և ուսուցման համակարգերի ստեղծումը՝ հաշվի առնելով սովորողների զարգացման մակարդակը, հետաքրքրությունները, հակումները, ընդունակությունները, իմացական դրդապատճառները: 20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը նշանավորվեց հանրակրթական բարեփոխման անհրաժեշտությամբ, որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում դպրոցի՝ աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու, տեղաշարժվելու կարողությունը: Կրթական համակարգերին ժամանակակից բովանդակության հաղորդումը, իննովացիոն գործընթացները ենթադրում են ընդհանուր կրթության բովանդակության և կառուցվածքի կատարելագործման ծրագրի իրականացում:

Առկա հիմնախնդիրները լուծելու համար հրատապ դարձավ Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության քաղաքականությունն ու բովանդակությունը նորովի սահմանելու, հանրակրթության նպատակներն ու բարեփոխումների ռազմավարությունը մշակելու անհրաժեշտություն: Ընդհանուր կրթության որակի բարձրացման համար պայմաններ ստեղծելու նպատակով պլանավորվում է տարբերակված (հոսքային) և անհատականացված կրթության ապահովումը պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ կրթական տարբեր ծրագրերի հիման վրա, ավագ դպրոցում տարբերակված ուսուցման ճկուն համակարգի մշակումը և ներմուծումը:

Ելնելով այդ դրույթներից ներկայացված են տարբերակված հոսքի ուսուցման նպատակները, հենքային ուսումնական պլանի բաղադրիչները:

Հանրակրթության բարեփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հետազոտության ընթացքում մեր կողմից իրականացվեց գիտական և ուսումնական գրականության վերլուծություն, հանձնարարականներ մշակվեցին հիմնական դպրոցի 9-րդ դասարանում նախադասային ուսուցման կազմակերպման, հոսքային ուսուցման պատրաստության, ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում հոսքային ուսուցման մոդելների փորձաքննության համար: Դիտարկվեցին հոսքային ուսուցման զարգացման միտումները արտասահմանյան կրթական համակարգերում, քննարկվեց հոսքային ուսուցման

ընթացքում անհատական ուսումնական ծրագրերի մշակման հարցը, մշակվեցին կառավարչական որոշումների ընդունման մեխանիզմները կրթության կառավարման պետական գերատեսչությունների և ուսումնական հաստատությունների մակարդակով, համեմարարականներ մշակվեցին առարկաների հոսքային ուսուցմամբ դասագրքերի ստեղծման ուղղությամբ, մշակվեց նաև հիմնական և հոսքային առարկաների դասավանդման մեթոդիկա:

Այս ենթազխում ներկայացված են նաև ավագ դպրոցներում կենսաբանության տարբերակված հոսքային ուսուցման ուղղությամբ մեր ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված հիմնախնդիրները: Աշակերտների ուսումնական նվաճումների՝ մեր կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների հիման վրա մենք ստացանք հետևյալ պատկերը. 10-րդ դասարանի աշակերտների 30%-ը չի կարողանում ինքնուրույն հաղթահարել առաջացած դժվարությունները, պլանավորել ժամանակը, որոշել հետաքրքրությունների ոլորտը, հարցվածների 45%-ը կարողանում է աշխատել մեծածավալ ուսումնական տեղեկատվությամբ և ինքնուրույն կազմակերպել ուսումնական գործունեությունը, 25% հարցվածներ կարողանում են կազմել և մեկնաբանել գծանկարներ, աղյուսակներ, դիագրամներ, կատարել ստեղծագործական աշխատանքներ և նախագծեր, ինքնուրույն լաբորատոր փորձեր անել, մեկնաբանել, սահմանել, եզրակացություններ անել:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ավագ դպրոցի ուսումնական աշխատանքի պրակտիկայում գերակշռում են հիմնականում ուսուցման բացատրական-դիտագնական մեթոդները, ավելի քիչ են կիրառվում ուսումնախմացական տարաբնույթ խնդիրների լուծման և գործնական աշխատանքների կատարման ուղղությամբ համակարգված աշխատանքները՝ տեղեկատվական աղբյուրների և հետազոտական նյութերի կիրառմամբ:

Դիտարկումները ցույց են տալիս, որ խոր անհրաժեշտություն կա ստեղծել անհատական ուսումնական պլաններ, որոնք թույլ կտան իրականացնել սովորողների կրթական տարբեր պահանջումները:

Երկրորդ ենթազխում՝ «Կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման սկզբունքները» ներկայացված և բնութագրված են կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման սկզբունքները: Ավագ դպրոցում տարբերակված հոսքային ուսուցումը հիմնված է հոսքային առարկաների այն թեմաների խորացված ուսումնասիրության վրա, որոնք մասնագիտորեն, անձնային և սոցիալական առումով առավել նշանակալի ազդեցություն ունեն սովորողների կողմնորոշումների, աշխարհայացքային պատկերացումների և արժեքային համակարգի ձևավորման վրա:

Կենսաբանության հոսքային ուսուցման տեսական հիմքն են կազմում մանկավարժական այն սկզբունքներն ու օրինաչափությունները, որոնք սահմանում են կենսաբանության հոսքային ուսուցման գործընթացի կազմակերպման և բովանդակության ընտրության պահանջները, ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ընտրությունը:

Ավագ դպրոցում կենսաբանության հոսքային ուսուցման տեսական հիմքերի որոշման համար առանձնացվել են սկզբունքների երկու խումբ՝ կենսաբանության հոսքային դասընթացի բովանդակության ձևավորման սկզբունքներ և կենսաբանության հոսքային ուսուցման գործընթացի կազմակերպման սկզբունքներ:

Կենսաբանության հոսքային ուսուցման դասընթացի բովանդակության

ձևավորման սկզբունքներն են՝ մարդասիրացման, մշակութափարմարության, գիտապատմական, հոսքային տարբերակման, կենսաբանական գիտելիքների գիտականության և հիմնարարության, մասնագիտական ուղղվածության և այլն:

Կենսաբանության հոսքային ուսուցման գործընթացի կազմակերպման սկզբունքներն են՝ անհատականացման, ուսումնական և հետազոտական գործունեության միասնության, պրոբլեմային ուսուցման, սովորողների կոլեկտիվ, անհատական, համագործակցային գործունեության համատեղման, սովորողների ստեղծագործական ակտիվության, իմացական պահանջմունքների բավարարման, դրդապատճառների ձևավորման և այլն:

Երրորդ ենթագլխում՝ «Կենսաբանության տարբերակված ուսուցման մեթոդիկական համակարգի մոդելը ավագ դպրոցի բնագիտական հոսքում» դիտարկված է կենսաբանության տարբերակված ուսուցման մեթոդական համակարգի մոդելը ավագ դպրոցի բնագիտական հոսքում: Կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդական համակարգն ունի իր բաղադրատարրերը և գործառնությունները:

Առանձնացվել են և բնութագրվել կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդիկայի հիմնական գործառնությունները՝ սոցիալական, աշխարհայացքային, դաստիարակչական, զարգացնող, մասնագիտական-կողմնորոշիչ և այլն:

Կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդիկայի մշակման ժամանակ նպատակահարմար է կառուցել տեսական մոդել, որի միջոցով հնարավոր է սահմանել մեթոդական բաղադրատարրերը, դրանց փոխադարձ կապն ու բնութագրիչները:

Կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդական համակարգի մոդելը ընդգրկում է նպատակային, նախագծային, բովանդակային, ընթացակարգային բաղադրատարրերը:

Ներկայացված է բնութագրված են կենսաբանության հոսքային ուսուցման նպատակների երեք հիմնական բաղադրատարրերը, դրանց բնութագիրը ու փոխադարձ կապը:

Կենսաբանության հոսքային ուսուցման բաղադրատարրերը սահմանելիս մենք հիմնվել ենք կենսաբանության հոսքային դասընթացի բովանդակության ընտրության և ուսուցման ընդհանուր սկզբունքների վրա:

Կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդիկայի բովանդակային բաղադրատարրերը ներկայացվում է գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի բաղադրիչներով:

Ավագ դպրոցի ընդհանուր և տարբերակված հոսքերի համար ներկայացված են առանձին ծրագրեր, որոնց էական տարբերությունը վերաբերում է ուսումնական նյութի բովանդակության խորացմանը: Դիտարկված և հիմնավորված են կենսաբանության հոսքային ուսուցման գործընթացում կիրառվող ուսուցման ձևերը: Ուսուցման գործընթացի կազմակերպման առավել նպատակահարմար ձևերն են դասերի բազմազան տեսակները (պրոբլեմային դասախոսություններ, իրազնական դասեր, դասախոսություններ՝ էվրիստիկ զրույցի տարրերով, սեմինարներ), պրակտիկումներ, համակցված դասեր, ուսումնական խաղեր, նախագծեր: Հոսքային ուսուցման գործընթացում մեծ նշանակություն է ձեռք բերում արտադասարանային աշխատանքը, որը ներառում է գիտական գրականության ընթերցանություն, գիտական բնույթ ունեցող

թեմատիկ միջոցառումների կազմակերպում, գիտական կոնֆերանսներին մասնակցություն զեկուցումներով: Առանձնահատուկ նշանակություն ունեն էքսկուրսիաները, որոնց ընթացքում բացահայտվում են կենսաբանական օրենքները բնության ամմիջական շփման հետ: Կենսաբանության հոսքային ուսուցման նպատակների ու խնդիրների համակարգվածությունը կանխորոշում է այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք բարձրացնում են աշակերտի ինքնուրույնությունն ու ակտիվությունը՝

- տեղեկատվական մեթոդներ, որոնք կիրառվում են տեղեկատվական աղբյուրներով աշխատանքների իրականացմանը,

- հետազոտական մեթոդներ, որոնք ուսումնական հետազոտությունների շրջանակներում նպաստում են սովորողների՝ ուսումնական խնդիրներ լուծելու կարողությունների զարգացմանը:

Ատենախոսության **«Կենսաբանության ուսուցման մեթոդիկայի փորձարարական հիմնավորումը հանրակրթական ավագ դպրոցի բնագիտական հոսքում»** խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Կենսաբանության տարբերակված ուսուցման առկա վիճակը ավագ դպրոցի ուսումնական գործընթացում» ներկայացված է հետազոտության առաջին ձևավորող փորձի արդյունքները: Հարցման պատասխանների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցիչների մեջ դեռևս բավականաչափ հատուկ պատկերացումներ չեն ձևավորված հոսքային և խորացված ուսուցման տարբերակման վերաբերյալ: Իշխում է այն տեսակետը, որ առարկայի խորացված ուսուցումը տվյալ գիտության հիմունքների առավել լուրջ, հանգամանալից, ուսումնասիրության ուղղություն է: Հարցման արդյունքների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ շատ ուսուցիչներ միայն ընդհանուր գծերով են պատկերացնում հոսքային ուսուցման էությունը: Նրանք էական տարբերություններ չեն տեսնում առարկաների հոսքային և խորացված ուսուցման միջև: Հոսքային ուսուցման առաջատար ձևեր են նշվում դասախոսությունները, գիտափորձերը, սակայն առանձնապես մեծ ուշադրություն չի հատկացվում սովորողների գիտահետազոտական գործունեությանը:

Հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դպրոցականները նախընտրում են հոսքային ուսուցումը և համոզված են, որ այն նպաստում է պետական միասնական ավարտական քննությունները հաջողությամբ հանձնելուն և ընտրած մասնագիտության գծով բուհ ընդունվելուն:

Դասերին պատրաստվելիս սովորողները, ըստ հարցման տվյալների, հազվադեպ են օգտվում լրացուցիչ գրականությունից. նրանց համար գիտելիքների հիմնական աղբյուրն են դասագիրքը և համակարգչային տեղեկատվությունը՝ համապատասխան կայքերից և էլեկտրոնային գրադարաններից:

Վերլուծելով հարցման արդյունքները՝ հանգել ենք այն ընդհանուր եզրակացության, որ սովորողները հիմնականում ուսուցչի բացատրությունը նախընտրում են ինքնուրույն աշխատանքից, և հոսքային ուսուցման կազմակերպման ժամանակ պետք է շեշտը դնել ստեղծագործական տարրերով ինքնուրույն առաջադրանքների, լաբորատոր և գործնական աշխատանքների կատարմանը: Ուսուցման գործընթացում պետք է ավելի լայնորեն կիրառվեն պրոբլեմային, զարգացնող. համագործակցային, ինտերակտիվ ուսուցման

տեխնոլոգիաները, ուսումնական նախագծերը: Հատկապես պետք է կարևորել ընտրովի դասընթացների թեմատիկայի ընդլայնումը, դասավանդման մեթոդիկայի կատարելագործումը:

Երկրորդ ենթագլխում ներկայացված է մեր կողմից մշակված կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական հիմնավորումը: Կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդիկան կառուցվում է՝ համաձայն տարբերակված հոսքային ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմունքների, որոնք մեր կողմից սահմանվել և հիմնավորվել են տեսական հետազոտության շրջանակներում: Կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդիկայի մշակման ժամանակ հատուկ ուշադրություն է հատկացվել հոսքային դասընթացի բովանդակության ընտրությանը:

«Կենսաբանության հիմունքներ» դասընթացի բովանդակության կառուցվածքային մոդելում արտացոլվում են կենսաբանության առաջատար տեսությունները:

Այդուսակով ներկայացված են բնագիտական հոսքի դասարաններում կենսաբանության հոսքային ուսուցման համակարգի բաղադրատարրերը:

Ելնելով մեր հետազոտության նպատակից հատուկ ուշադրություն է դարձվել կենսաբանական գիտելիքների իմտենսիվ զարգացման, կենսաբանության կիրառական տարբեր բնագավառների ձևավորման ժամանակաշրջաններին:

Դիտարկված են նոր նյութի ուսումնասիրության ընթացքում սովորողների ուսումնական գործունեության ակտիվացման նպատակով մեր կողմից մշակված առաջադրանքները, ինչպես նաև դաս-սեմինարների անցկացման հետ կապված որոշ խնդիրներ ու մոտեցումներ, ինքնուրույն աշխատանքների թեմատիկան: Հատուկ տեղ է հատկացվում ուսումնական լրացուցիչ գրականությանը՝ աշխատելու, եզրահանգումներ անելու կարողությունների զարգացմանը: Նկարագրելով կենսաբանության զարգացման հեռանկարային ուղղությունները՝ անհրաժեշտ է բնութագրել այն տեխնոլոգիաները, որոնք հիմնված են արդյունաբերական արտադրության մեջ կենսաբանական համակարգերի ու գործընթացների կիրառման հետ: Սովորողների դիտարկման են ներկայացվում կենսատեխնոլոգիական հիմնախնդիրներ:

Երրորդ ենթագլխում տրված է կենսաբանական տարբերակված հոսքի ուսուցման մեթոդական համակարգի փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունը: Գիտափորձի սկզբում աշխատանքների արդյունքները խմբավորվել են ըստ գիտելիքների յուրացման երեք մակարդակների՝ բարձր, միջին, ցածր: Թեստային առաջադրանքների կատարման բարձր մակարդակ են դրսևորել փորձարարական խմբերում՝ 24%, միջին մակարդակ՝ 50%, ցածր մակարդակ՝ 26%, ստուգողական խմբերում՝ բարձր՝ 16%, միջին՝ 41%, ցածր՝ 43%:

Տվյալներն արտացոլված են թիվ 1 աղյուսակում:

Թեմայի յուրացման մակարդակները ստուգողական և փորձարարական խմբերում գիտափորձի սկզբում

Աղյուսակ 1

«Բջջաբանության հիմունքներ» թեմայի յուրացման մակարդակները	Աշակերտների թիվը	Ստուգողական խումբ, %	Փորձարարական խումբ, %
Բարձր	200	16	24
Միջին	200	41	50
Ցածր	200	43	26

Յուրացված գիտելիքների կայունության, հիշողության մեջ ամրակայման վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով նույն ստուգողական աշխատանքը սովորողներին առաջարկվել է որոշ ժամանակ անց (ի դեպ, փորձարարական խմբերում մանկավարժական նպատակաուղղված գործունեություն է իրականացել): Արդյունքներն արտացոլված են թիվ 2 աղյուսակում:

«Բջջաբանության հիմունքներ» թեմայի յուրացման մակարդակները ստուգողական և փորձարարական խմբերում (կրկնակի ստուգման արդյունքում)

Աղյուսակ 2

«Բջջաբանության հիմունքներ» թեմայի յուրացման մակարդակները	Աշակերտների թիվը	Ստուգողական խումբ, %	Փորձարարական խումբ, %
Բարձր	200	19	32
Միջին	200	44	52
Ցածր	200	37	16

Կրկնակի ստուգման արդյունքները վկայում են. որ որոշակիորեն դիմամիկա կա նաև ստուգողական խմբերում, սակայն այն առավել ակնառու է փորձարարական խմբերում:

Վերլուծելով առաջադրանքների պատասխանները՝ մենք հանգեցինք այն եզրակացության, որ սովորողները բավականաչափ հստակ ու ճշգրիտ սահմանում են գենետիկայի հիմնական հասկացությունները, գիտեն գենետիկայի զարգացման պատմությունը, պատկերացնում են մարդու գենետիկայի նշանակությունը բժշկագիտության և առողջագիտության համար: Շատ պատասխաններում խորությամբ ու հիմնավոր պարզաբանված են Գրեգոր Մենդելի կողմից կատարված փորձերը, նրա բացահայտված ժառանգման օրինաչափությունները: Սակայն սովորողները դժվարանում են լուծել

գենետիկայի տիպային խնդիրներ և վարժություններ, այսինքն՝ տեսական գիտելիքները կիրառել գործնականում: Փորձարարական խմբերի սովորողների 68%-ը և ստուգողական խմբերում՝ 31%-ն է հաջողությամբ լուծում գենետիկական խնդիրներ, կազմում քրոմոսոմների գենետիկական քարտեզներ, գծապատկերներ մարդու սեռի առաջացման վերաբերյալ:

Առանձին աղյուսակով և գծապատկերով ներկայացված են տրված երեք առաջադրանքների կատարման, դրանց կրկնաստուգման արդյունքները: Աղյուսակի տվյալների վերլուծությունը, ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ և՛ փորձարարական, և՛ ստուգողական խմբերում բարձր մակարդակը գերակշռում է: Սա մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ կենսաբանության դասընթացում դիտարկվող երկու թեմաներն էլ սովորողների համար առանձնահատուկ հետաքրքիր են, և նրանք մեծ ակտիվություն են ցուցաբերում դասերի ընթացքում:


Ներկայացված են ստացված արդյունքների համեմատական վերլուծությունը, սովորողների կողմից կենսաբանական թեմաների յուրացումը, կենսաբանության և կենսաբանական մասնագիտությունների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների առկայության վերաբերյալ անցկացված հարցման տվյալների դիմամիկան աղյուսակների և գրաֆիկների տեսքով:

Մասնագիտական հետաքրքրությունների ձևավորվածության մակարդակների վերաբերյալ տվյալներն արտացոլված են թիվ 3 աղյուսակում և թիվ 1 գծապատկերում (ըստ ստուգողական և փորձարարական խմբերի՝ 10-րդ և 11-րդ դասարաններում):

Մասնագիտական հետաքրքրությունների ձևավորվածության վերաբերյալ արդյունքները (%)

Աղյուսակ 3

Դասարաններ	Խմբեր	Մասնագիտական հետաքրքրությունների ձևավորվածության մակարդակները			
		1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
10-րդ	Փորձարարական	54	27	15	4
	Ստուգողական	58	31	9	2
11-րդ	Փորձարարական	28	19	30	23
	Ստուգողական	42	21	22	15



Գծապատկեր 1. Մասնագիտական հետաքրքրությունների ձևավորվածության վերաբերյալ արդյունքները (%) :

Տվյալների համեմատական վերլուծությունից ակնհայտ է, որ կենսաբանության ուսումնասիրության նկատմամբ մասնագիտական հետաքրքրությունը նշանակալիորեն աճել է 11-րդ դասարանում, այն դեպքում, երբ ստուգողական խմբերում այդ դինամիկան նշանակալի չէ: Այսպես՝ փորձարարական խմբերում 1-ին մակարդակի ցուցանիշները նվազել են 26 %-ով, 2-րդ մակարդակինը՝ 8 %-ով, 3-րդ մակարդակում աճել են 15 %-ով, 4-րդ-ում՝ 19 %-ով: Դա հիմնականում բացատրվում է ավագ դպրոցում կենսաբանության տարբերակված հոսքային ուսուցման առանձնահատկությամբ և մեր կողմից կիրառված մեթոդիկայի արդյունաբերությամբ: Գիտափորձի ընթացքում մենք բավականաչափ աշխատանք կատարեցինք կենսաբանական գիտության արդիական նշանակության, գիտական հետաքրքիր բացահայտումների, գիտնականների ներդրումների, կենսաբանական հետազոտությունների առանձնահատկությունների, կենսաբանության բնագավառի մասնագիտությունների վերաբերյալ սովորողներին լայն տեղեկատվություն հաղորդելու, նրանց մասնագիտական կողմնորոշումները հստակեցնելու ուղղությամբ: Գիտափորձի ընթացքում, հիմնվելով փորձարարական հետազոտության տվյալների վրա, մենք հանգեցինք այն եզրակացության, որ կենսաբանության տարբերակված ուսուցման՝ մեր կողմից նշանակված մեթոդիկական արդյունավետ է և կարող է հաջողությամբ կիրառվել հանրակրթական ավագ դպրոցի բնագիտական հոսքի շրջանակներում:

Եզրակացություն

1. Հանրակրթական ավագ դպրոցում տարբերակված հոսքի ուսուցումը կազմակերպվում է խորությամբ հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունները, հակումները, ընդունակությունները, կրթական պահանջմունքները:

Մանկավարժության մեջ և պրակտիկայում տարբերակված հոսքի ուսուցման խնդիրը արդիական է եղել բոլոր ժամանակներում: Տարբերակված հոսքային ուսուցումը լայն կիրառում ունի տարբեր երկրների կրթական համակարգում: Այն իրականանում է տարբեր ձևերով՝ կամ բնագիտամաթեմատիկական և հումանիտար բնագավառի առարկաների միջև ընտրությամբ, կամ այն առարկաների խորացված ուսուցմամբ:

Ավագ դպրոցի տարբերակված հոսքի հենքային ուսումնական պլանն ընդգրկում է համընդհանուր պարտադիր և հոսքային պարտադիր բաղադրիչները, ընտրովի առարկաները և նախասիրական պարապմունքները:

2. Կենսաբանության տարբերակված դասընթացի բովանդակության ձևավորումը հիմնվում է մարդասիրական, մշակութափարմարության, գիտապատմական, հոսքային տարբերակման, կենսաբանական գիտական գիտելիքների հիմնարարության, մասնագիտական ուղղվածության և այլ սկզբունքների վրա: Կենսաբանության տարբերակված ուսուցման գործընթացի կազմակերպման հիմնական սկզբունքներն են՝ անհատականացման, ուսումնական և որոնողական-իմացական գործունեության միասնության, պրոբլեմային ուսուցման, երկխոսական ուսուցման, սովորողների կոլեկտիվ և անհատական գործունեության միասնության, սովորողների ստեղծագործական ակտիվության, ինքնուրույնության, իմացական պահանջմունքների և դրդապատճառների բավարարման և այլն:

3. Ավագ դպրոցի բնագիտական հոսքում կենսաբանության տարբերակված ուսուցման մեթոդական համակարգի մոդելը ներառում է այդ գործընթացի նկատմամբ մեթոդաբանական մոտեցումները, կենսաբանության հոսքային ուսուցման հիմնական գործառնությունները, նպատակային նախագծման, բովանդակային, ընթացակարգային, արդյունավետության բաղադրատարրերը: Կենսաբանության հոսքային ուսուցման նպատակները՝ ուսուցողական, դաստիարակչական և զարգացնող բաղադրատարրերով: Մոդելը ներառում է նաև կենսաբանության հոսքային ուսուցման մեթոդիկայի բովանդակությունը՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների և առժեհամակարգի բաղադրիչներով, մեթոդական համակարգի ընթացակարգային բաղադրատարրը՝ ուսուցման կազմակերպման ձևերը, ուսուցման մեթոդները և միջոցները, սովորողների արտադասարանային գործունեությունը, ուսուցման գործընթացի սուբյեկտ-սուբյեկտ փոխներգործությունը և ակնկալվող արդյունքները:

4. Բնագիտական հոսքի դասարաններում կենսաբանության ուսուցման մեթոդիկան ներառում է՝ անձնակենտրոն ուսուցման հայեցակարգային դրույթները անձի զարգացմանն ու մասնագիտական կողմնորոշմանը նպաստող բովանդակությունը, ուսուցման անհատականացման ու տարբերակմանը նպաստող ձևերը, մեթոդները և միջոցները: Պրոբլեմային դասախոսություններ, էվրիստիկ զրույցի տարրերով դասախոսություններ, սեմինարներ, բանավեճեր, պրակտիկումներ, համակցված դասեր, ուսումնական խաղեր, նախագծեր,

տնային ստեղծագործական առաջադրանքներ՝ հետազոտական աշխատանքի տարրերով, մասնակցություն գիտական կոնֆերանսներին, թեմատիկ զեկուցումներ, էքսկուրսիաներ:

5. Կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ուսուցման գործընթացում «սուբյեկտ-սուբյեկտ» փոխներգործությամբ, կրթական հաղորդակցական, երկխոսական, փոխներգործում (ինտերակտիվ) միջավայրի ձևավորմամբ, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների նպատակային կիրառմամբ, դասարանային և արտադասարանային աշխատանքների հմուտ զուգակցմամբ, դպրոցականների տարիքային, անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ:

6. Տարբերակված հոսքային ուսուցման մեթոդիկան հիմնվում է ուսուցման փոխներգործում և համագործաբացային մեթոդների կիրառման վրա: Այդ գործընթացում առավել նպատակահարմար է կիրառել դերախաղը, դեպքի նկարագրությունը, հետազոտական նախագիծը և աշակերտների ինքնուրույնության, ստեղծագործական և համագործակցային կարողությունները զարգացնող նորագույն այլ մեթոդներ:

7. Գիտափորձի արդյունքները վկայում են, որ կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման մեր կողմից մշակված մեթոդիկան արդյունավետ է և կարող է կիրառվել հանրակրթական ավագ դպրոցի բնագիտական հոսքում կենսաբանության ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով, մասնագիտական ուսումնական հաստատությունների կենսաբանության ուսուցման պրակտիկայում, ինչպես նաև մանկավարժական կադրերի որակավորման բարձրացման համակարգում և մանկավարժական բուհում կենսաբանության ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության գործընթացում:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են.

1. «Особенности методики преподавания моховидных». Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Երևան 2008թ., N3, էջ 57-63:

2. «Տարբերակված հոսքային ուսուցման կազմակերպման փորձը հայրենական մանկավարժության մեջ», Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Երևան 2008թ., N3 (6), էջ 131-139:

3. «Դոսքային ուսուցման հիմնախնդիրը ավագ դպրոցի կենսաբանության կրթության պրակտիկայում», Մանկավարժություն, Երևան 2010թ., N 2, էջ 20-28:

4. «Տարբերակված հոսքային ուսուցման հոգեբանամանկավարժական հիմնավորումը», «Մանկավարժական միտք», Երևան, Ջանգալ 2010թ., (3-4), էջ 86-94:

Погосян Рузан Эдгаровна
ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ МЕТОДИКИ ПРЕПОДАВАНИЯ БИОЛОГИИ В
СТАРШЕЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – "Методика преподавания и воспитания" (биологии).

Защита диссертации состоится 27-го марта 2014г. в 14:00 на заседании специализированного совета 020 ВАК "Педагогика" по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.

Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Мец 17.

Р Е З Ю М Е

Актуальность исследования. В современной школе важной задачей воспитания и содержания образования является формирование личности, знающей явления, законы и закономерности природы, владеющей и на практике применяющей методы познания, понимающей и осознающей важность гармоничных отношений между человеком и природой, имеющей научное мировоззрение.

Цель преподавания предмета "Биология" в общеобразовательной школе – обеспечение учащихся знаниями о природе и живых организмах, соответствующими умениями и навыками; формирование системы ценностей, воспитание личности, наделенной экологической грамотностью, пониманием и культурой, которая осознает смысл жизни как наивысшую ценность на планете Земля, и которая сумеет в дальнейшем сформировать гармоничные отношения между природой и общественностью, демонстрируя высокую степень самосознания и чувство ответственности.

Основная цель общеобразовательной старшей школы - обеспечить учащегося профессиональным образованием, а также знаниями, способностями и навыками необходимыми в самостоятельной жизни.

Организация, определение целей и задач, индивидуализация обучения на дифференцированных потоках в старшей школе, разработка критериев приема учащихся в поточные классы, задачи по разработке содержания дифференцированного курса обучения изучались со стороны психологов, педагогов, методистов в целом ряде исследований (Л.Я. Зорина, Г.С. Калинова, Б.Д. Комиссаров, В.В. Краевский, И.Я. Лернер, В.Н. Максимова, А.В. Марина, И.М. Осмоловская, Е.С. Рабанский, Л.Н. Рожина, И.Е. Унт, Н. М. Шахмаев, Т.В. Тангамян).

В настоящее время существует глубокое противоречие, с одной стороны, между необходимостью в изменяющихся научно-технических, социально-экономических и экологических условиях разработки реформы содержания биологического образования и новой методической системой преподавания, и, неудовлетворительным уровнем теоретического и методического поточного преподавания биологии в старшей общеобразовательной школе, с другой стороны. Поиском путей решения данного противоречия и был обусловлен выбор темы нашего исследования, а именно: "Пути совершенствования методики преподавания биологии в старшей школе".

Цель исследования заключается в разработке эффективной методики преподавания биологии в старшей школе.

Задача исследования – поиск эффективных путей улучшения качества преподавания биологии в старшей школе с поточным дифференцированным подходом к обучению.

Для решения предлагаемой задачи были использованы **следующие методы исследования**, теоретический метод, эмпирический метод, статистические методы математического анализа экспериментальных данных .

Научная новизна исследования:

1. Уточнены, определены и сформулированы следующие понятия – “дифференцированное обучение”, “поточное обучение”, “факультативный курс”; специализированные и неспециализированные факультативные курсы также были классифицированы;

2. Разработана педагогическая модель методической системы преподавания биологии на дифференцированных потоках обучения;

3. Была разработана методика преподавания общей биологии для классов с уклоном естествознания, включающая ориентировочные цели обучения, содержание, способствующее развитию и профессиональному ориентированию личности учащегося, также методы, способы и виды дифференцированного и индивидуального подходов в преподавании.

Теоретическое значение исследования:

1. Обоснованы принципы формирования содержания учебного курса биологии в поточных классах. Также сформулированы принципы организации учебного процесса по изучению биологии на дифференцированных потоках.

2. Предложены особые принципы преподавания биологии в старших школах с дифференцированным подходом обучения.

3. Разработана теоретическая модель преподавания биологии в старших школах с дифференцированным подходом обучения.

Практическое значение исследования:

1. Разработана эффективная методика преподавания биологии в старшей школе.

2. Разработанная нами методика по преподаванию биологии на дифференцированных потоках может быть применена в старшей школе в классах с уклоном естественных наук, в практике преподавания биологии в средне-специализированных учебных заведениях, а также в подготовке будущих учителей по биологии в педагогических вузах и на курсах по повышению квалификации педагогических кадров.

Достоверность и обоснованность работы обеспечена основными методологическими принципами, которые обоснованы теоретически, а также подтверждены и проверены экспериментально.

По теме диссертации опубликовано 4 статьи.

Ruzan Pogosyan Edgari

**WAYS OF IMPROVING METHODOLOGY OF TEACHING BIOLOGY IN HIGH SCHOOL
GENERAL CHARACTERISTICS OF THE THESIS**

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Teaching and education Methodology" (Biology).

The defense of the thesis will take place on 27 March, 2014 at 14:00 at the meeting of the specialized pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.
(Address: Yerevan 0010, Tigran Mets str. 17).

SUMMARY

The Relevance of the Research. The important task of the contemporary schooling and education is the upbringing of a person who knows the phenomena, laws, and patterns of nature, who possesses and practices those tools of knowledge, a person with a scientific world-view, who understands and acknowledges the importance and value of a harmonious relationship between a human and nature.

The purpose of teaching the subject "Biology" in secondary school is to provide students with the knowledge about the nature and living organisms, equip them with relevant skills and abilities, as well as to form a system of values, to educate an individual, endowed with ecological literacy, understanding and a culture, an individual who acknowledges the meaning of life as the highest value on the planet Earth, and who will be able to create harmonious relationship between the nature and the society in the future by demonstrating a high degree of self-awareness and sense of responsibility.

The main goal of a high school is to provide a student with professional education and knowledge, abilities and skills required for the independent life. This assumes to create conditions for further education and activity for each and every student, the full and harmonious streaming and teaching of subjects educated in the general stream, the effective choice of subjects and the opportunity for a correct distribution of subject-hours at differentiated streams.

Organization, goal and objectives setting, individualization of differentiated instruction in high school, criteria of student enrollment in the streamed classes, tasks of developing the content for the differentiated curriculum have been studied by psychologists, teachers, methodologists in various studies (L.Y. Zorina, G.S. Kalinova, B.D. Komissarov, V.V. Krajevski, I.E. Lerner, V.N. Maximova, A.V. Marina, I.M. Osmolovskaya, E.S. Rabansky, L.N. Rozhina, I.E. Unt, N.M. Shahmaev, T.V. Tangamyanyan).

Currently, there is a serene contradiction between, on the one hand, the necessity to reform the biological education and to develop the content and methodology of a new teaching system in the changing technological, socio-economic and environmental conditions, and, on the other hand, the existence of unsatisfactory level of theoretical and methodological streaming teaching of biology in high schools. A search of ways for solving this contradiction has set conditions for our study's theme choice, namely "Ways of improving methodology of teaching biology in high school".

The **task of our study** is to find effective ways to improve the quality of teaching biology in high school with streaming differentiated approaches of learning.

The **purpose of the study** is to develop effective methods of teaching "Biology" in high schools.

To address the proposed tasks the following methods have been used, theoretical method, empirical method, statistical methods of mathematical analysis of the experimental data.

The scientific novelty of the study.

1. The following terms have been defined and formulated - "differentiated learning", "streaming", "elective training"; specialized and non-specialized elective courses and trainings have been also classified.

2. The pedagogical model of a methodical system of teaching biology at differentiated streams has been developed.

3. The methodology of teaching general biology in classes with a natural science bias has been developed, including the indicative learning objectives to promote the development of vocational and individual guidance of student, as well as the methods, techniques and types of differentiated and individualized instruction have been defined.

The theoretical significant of the study.

1. The principles of the content of biology training course in streamed classes have been proved. The principles of organization of the educational process of differentiated instruction of biology have been formulated.

2. The peculiar principles of teaching biology in high school with a differentiated educated system have been proposed, i.e. the unity of cognitive, research and creative activity of students, etc.

3. The theoretical model of teaching of biology in high school with a differentiated education approach has been developed.

The practical significance of the study.

1. The effective methodology of teaching biology in high school has been developed. This method can be effectively applied in practice in high schools with streaming education.

2. The developed methodology of teaching biology at differentiated streams can be applied in a high school in classes with natural science bias, in the practice of teaching biology in secondary specialized educational institutions, as well as at postgraduate and extension courses for future teachers of biology.

The reliability and validity of the present work is based on and secured by the main methodological principles, that are proved theoretically, checked and documented experimentally.

4 scientific-methodological articles about thesis were published.